**Արձանագրություն N 2-2**

**ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/10 ծածկագրով Ա. Հովհաննիսյանի անվան հմ. 194 հիմնական դպրոցի նորոգման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 15.08.2025թ.

ժամը 10:10

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Գասպարյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Խաչատրյան

Ս. Իշխանյան

Ա. Եղիազարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հակոբյան

Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ՝ Ա. Աչոյանը

**1. Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի ուսումնասիրության մասին**

---

(Ս. Գասպարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

1.1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 67-րդ կետի համաձայն մասնակիցների կողմից ներկայացված տվյալների իսկությունը ստուգելու նպատակով գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել իրավասու մարմիններին: Բացառությամբ առողջապահության նախարարության հարցում ուղարկած մյուս մարմինների կողմից եզրակացությունները ներկայացվել են:

1.1.2 «Բիդեք» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջներին անհամապատասխանություններ չեն արձանագրվել:

1.1.3 «ՄԱՐԿՈ ԳՐՈՒՊ 7» ՍՊԸ և «123» ՍՊԸ կոնսորցիումի (այսուհետ՝ Կոնսորցիում) հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ

- Համատեղ գործունեության պայմանագրում հստակ նշված չէ, Կոնսորցիումի անունից հանդես եկող «Գործընկեր 1»-ի կողմից Կոնսորցիումի անունից հայտով ներկայացված փաստաթղթեր ստորագրելու (ներկայացնելու) իրավասություն ունենալու մասին:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել Կոնսորցիումին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 18.08.2025թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումները ներկայացվելու դեպքում, հայտերը կգնահատվեն բավարար, հակառակ դեպքում հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն: Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/10 ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի tender4@minurban.am էլ. փոստին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0:*

## 2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

---

(Ս. Գասպարյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 19.08.2025թ. ժամը 14:30-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ __________ Ս. Գասպարյան

Անդամներ՝ __________ Ա. Խաչատրյան

__________ Ս. Իշխանյան

__________ Ա. Եղիազարյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ __________ Գ. Հակոբյան